ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՀՐԱՄ ԱՐՄԵՆԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԱՄՐՈՑ-ԲՆԱԿԱՏԵՂԻՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԸ.00.01 - «Ճարտարապետություն և ճարտարապետական դիզայն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2018

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНЫЙ УНИВЕРСИТЕТ АРХИТЕКТУРЫ
И СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ

КИРАКОСЯН ВАГРАМ АРМЕНОВИЧ

ВОПРОСЫ СОХРАНЕНИЯ И ИСПОЛЬЗОВАНИЯ АРХИТЕКТУРНОГО НАСЛЕДИЯ КРЕПОСТЕЙ-ПОСЕЛЕНИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата архитектуры по специальности 18.00.01 - “Архитектура и архитектурный дизайн”

ЕРЕВАН 2018

© National Library of Armenia OCR by Portmind

Ատենախոսության թեման հաստատվել է Ճարտարապետության և շինարարարության Հայաստանի ազգային համալսարանում:

Գիտական ղեկավար՝ ճարտ. դոկտոր, պրոֆեսոր Յու.Ա. Սաֆարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ճարտ. դոկտոր, պրոֆեսոր Դ.Գ. Քերթմենջյան

ճարտ. թեկնածու, դոցենտ Ն.Է. Մխիթարյան

Առաջատար կազմակերպություն՝ «Ա. Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ:

Պաշտպանությունը կայանալու է 2018թ. հունիսի 5-ին, ժամը 13^{00}-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին կից գործող ՀՀ ԲՈՀ-ի «Ճարտարապետություն և շինարարություն» 030 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0009, ք.Երևան, Տերյան փ., 105:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՃՇՀԱՀ-ի գիտական գրադարանում:

Հասցեն՝ 0079, ք.Երևան, Մառի փող., 17/1:

Սեղմագրին կարելի է ծանոթանալ ՃՇՀԱՀ-ի պաշտոնական կայքում՝ www.nuaca.am

Սեղմագիրն առաքված է 2018թ. մայիսի 4-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
ճարտարապետության թեկնածու, դոցենտ Ս.Ա. Թովմասյան

Тема диссертации утверждена в Национальном университете архитектуры и строительства Армении.

Научный руководитель: доктор архитектуры, профессор Сафарян Ю.А.

Официальные оппоненты: доктор архитектуры, профессор Кертменджян Д.Г.

кандидат архитектуры, доцент Мхитарян Н. Э.

Ведущая организация: ГНКО “Национальный музей-институт архитектуры им. А. Таманяна”

Защита состоится 5-го июня 2018г. в 13^{00} часов на заседании Специализированного совета 030 - “Архитектура и строительство” ВАК РА, действующего при Национальном университете архитектуры и строительства Армении (НУАСА), по адресу: 0009, г.Ереван, ул. Теряна, 105.

С диссертацией можно ознакомиться в научной библиотеке НУАСА по адресу: 0079, г. Ереван, ул. Марра 17/1.

С авторефератом можно ознакомиться на официальном сайте НУАСА: www.nuaca.am

Автореферат разослан 4-го мая 2018г.

Ученый секретарь Специализированного совета:
кандидат архитектуры, доцент Товмасян С. А.

© National Library of Armenia

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքի արդիականությունը

Ամրոց-բնակատեղիները հայկական ճարտարապետական ժառանգության կարևորագույն մասն են կազմում, սակայն դրանցից շատերը ներկայում՝ XXI դարի սկզբին անմխիթար վիճակում են և հայտնվել են անհետանալու եզրին, քանի որ կորցրել են իրենց գործառական նշանակությունը, և բացակայում է նոր գործառույթի սահմանումը: Արդյունքում լքված շինություններին սպառնում է վանդալություն, ավերում և տարածքների ապօրինի զավթում: Զարգացող քաղաքին մոտ լինելը արդեն հանգեցնում է հուշարձանների (օրինակ՝ Կարմիր բլուր ամրոց (Թեյշեբաինի)) ավերմանը և սպառնում՝ դրանց պահպանությանը: Հնագույն բնակատեղիի հարակից տարածքում կա գերեզմանոց, որն արդեն ներառել է նաև հուշարձանի տարածքը, պեղված շինություններն աստիճանաբար քանդվում են, բնակատեղին մասամբ ծածկված է շինարարական ու կենցաղային աղբով, առկա է հուշարձանի պահպանության գոտում ճանապարհ կառուցելու կառավարական նախագիծ:

Պատմական միջավայրի պահպանությունը և նպատակային օգտագործումը պետք է դառնա քաղաքաշինության բնագավառի գերակայություն:

Այս իրավիճակում արդիական է դառնում ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման գործընթացի վերանայումը ճարտարապետական գիտության տեսանկյունից: ՀՀ Լոռու մարզը «Հյուսիսային Դարպաս» զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին 2009 թվականի կառավարության որոշումը արդիական է դարձնում ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման խնդիրների դիտարկումը Լոռու մարզի օրինակով: Կյանքի կոչելով այս որոշումը՝ արդիական են դառնում ճարտարապետական ժառանգության՝ այդ թվում և ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման խնդիրները:

Այս հետազոտությունը կարող է գիտական և մեթոդական հիմք ծառայել ՀՀ տարածքում պահպանված հինգ հարյուրից ավելի ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման արդիական խնդիրների լուծման համար:

Թեմայի ուսումնասիրվածությունը

Ամրոց-բնակատեղիներին վերաբերող գրականությունը հիմնականում ունի պատմահնագիտական ուղղվածություն: Հայաստանի ամրոցների մասին տեղեկություններ են հաղորդել գիտնականներ՝ Ղ. Ալիշանը (Տեղագիր Հայոց Մեծաց կամ աշխարհագրութիւն Հայաստանի, 1853), Հ.Ղ. Ինճիճեանը (Ստորագրութիւն Հին Հայաստանեայց, 1822), Ն. Սարգիսէանը, (Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, 1864): Բոլոր դարաշրջանների

© National Library of Armenia

ամրոցների մասին ընդարձակ տեղեկություններ է պարունակում Մ.Հ. Հովհաննիսյանի «Հայաստանի բերդերը» 1970 թ. աշխատությունը:

Առանձին ամրոց-բնակատեղիների մասին տեղեկություններ կան Ա.Ա. Աջյանի, Գ.Ե. Արեշյանի, Լ.Տ. Գյուզալյանի, Ս.Ա. Եսայանի, Ա.Կ. Զարյանի, Թ. Թորամանյանի, Է. Խանզադյանի, Վ. Հարությունյանի, Մ. Հասրաթյանի, Ի.Գ. Ղարիբյանի, Կ.Կ. Ղաֆադարյանի, Բ.Բ.Պիոտրովսկու, Հ.Ե. Սիմոնյանի, Գ.Տ. Տիրացյանի, Ա. Քալանթարյանի և այլոց ուսումնասիրություններում:

ՀՀ ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման խնդիրներին նվիրված է Դ.Ռ. Սարգսյանի (2000) «Դվին քաղաքատեղին և նրա ամրակայման և թանգարանացման խնդիրները» ատենախոսությունը, որում մշակված են Դվինի քաղաքաշինական հետազոտման, կառույցների ամրակայման և վերականգնման, ինչպես նաև հնավայրի թանգարանացման գիտամեթոդական համալիր սկզբունքներ:

Ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման խնդրի լուծումը անհնար է առանց դրանց ճարտարապետության պատմության խնդիրների իմացության, ուստի աշխատանքում բերված է ՀՀ ամրոց-բնակատեղիների ճարտարապետությանը վերաբերող ատենախոսությունների ուսումնասիրությունը: Լ.Վ. Կիրակոսյանի (1992) «Արագածի վաղմիջնադարյան ամրոց-բնակատեղիների ճարտարապետությունը» (ռուսերեն) աշխատությունում կատարվել է Արագածի վաղ միջնադարյան ամրոց-բնակատեղիների վերլուծություն և դասակարգում ըստ կոնստրուկտիվ լուծումների և գործառական նշանակության: Ընդհանրացվել են վաղ միջնադարյան ամրոց-բնակատեղիների ճարտարապետությանը և շինարվեստին վերաբերող նյութերը, ուսումնասիրվել են դրանց պաշտպանական համակարգերը և պաշտպանության կազմակերպման հարցերը: Ա.Զ. Սարգսյանի (2004) «Հայկական ամրոցաշինության ճարտարապետական բնագծերը 9-14-րդ դարերում (Կենտրոնական Հայաստանի և Կիլիկյան հայկական թագավորության օրինակներով)» ատենախոսությունում ուսումնասիրվում է զարգացած միջնադարում հայկական ամրոցաշինությունը՝ իր համալիր կտրվածքով: Բնորոշվում են միջնադարյան ամրոցաշինական ճարտարապետության համընդհանուր առանձնահատկությունները, տեղադրական չափանիշները: Ուսումնասիրվում են պարսպապատերի, աշտարակների, դարպասների, դղյակների ճարտարապետության առանձնահատկությունները: Ա.Ս. Աղաջանյանի՝ «Արագածի բրոնզեդարյան ամրոց-բնակատեղիների ճարտարապետությունը» (2006) ատենախոսությունում կատարվել է Արագածի ամրոց-բնակատեղիների հորինվածքային առանձնահակությունների բացահայտում, առաջադրվել և դասակարգվել են դրանց տարածական տիպերը:

© National Library of Armenia

Ճարտարապետական ժառանգության պահպանման և օգտագործման խնդիրը դուրս է ճարտարապետական գիտության սահմաններից: Ժամանակակից սոցիալ-տնտեսական պայմաններում այս խնդրի լուծման համար մեծ արժեք են ստանում հուշարձանների պահպանման ոլորտում օբյեկտների գնահատման օբյեկտիվացմանը (Ա.Ա. Եմելյանով, Տ.Ա. Սլավինա), ճարտարապետությունում և քաղաքաշինությունում ներդրումային գործոնի հաշվառմանը (Դ.Գ. Դոնցով, Ա.Բ. Նեկրասով), սոցիալական ուղղվածություն ունեցող ճարտարապետության գործունեության մեթոդաբանությանը (Օ.Գ. Սեվան) նվիրված հետազոտությունները:

Լոռու ճարտարապետական դպրոցին են նվիրված Գ. Շախկյանի (1986) «Լոռի: Պատմության քարակերտ էջերը» գիրքը և Կ.Մ. Կարեյանի (2006) «Լոռու ճարտարապետական դպրոցը» ատենախոսությունը:

Ընդհանուր առմամբ նյութերի վերլուծությունը ցույց է տվել, որ ՀՀ ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման հարցերը քիչ են ուսումնասիրված:

Աշխատանքի նպատակը

Գնահատել ՀՀ ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության պահպանման և օգտագործման ներուժը:

Հետազոտության հիմնական խնդիրները

1. Ընդհանրացնել և վերլուծել ամրոց-բնակատեղիների և ճարտարապետական ժառանգության այլ օբյեկտների պահպանման և օգտագործման առկա փորձը և տեսական մշակումները Հայաստանում և արտասահմանում:
2. Մշակել ՀՀ ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության պահպանության ներուժի գնահատման գործիքակազմ:
3. Մշակել ՀՀ ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության օգտագործման ներուժի գնահատման գործիքակազմ:

Հետազոտության մեթոդաբանությունը

Իրականացվել են դաշտային ուսումնասիրություններ, վերլուծվել են արխիվային և գրական նյութեր, պաշտոնական վիճակագրական նյութեր, կիրառվել են համակարգային, համեմատական, մաթեմատիկական վիճակագրական վերլուծության մեթոդներ:

Հետազոտության առարկան

Ամրոց-բնակատեղիների պահպանությունը և օգտագործումն է:

Հետազոտության սահմանները

Տարածքային սահմանները: Ընդգրկում են Հայաստանի Հանրապետության սահմանները: Լոռու մարզը, որն իր ռեկրեացիոն հնարավորություններով

© National Library of Armenia

առավել հզորներից է, նաև՝ բնութագրականն ու նպատակահարմարը ուսումնասիրվել է առավել մանրամասն:

Ժամանակագրական սահմանները: Աշխատանքում դիտարկված են ՀՀ ամրոց-բնակատեղիները վաղնջական ժամանակներից մինչև 20-րդ դարը ներառյալ: Ուսումնասիրությունում դիտարկվել են մի շարք ամրոց-բնակատեղիներ՝ անկախ դրանց տիպից և չափերից:

Հետազոտության գիտական նորույթը

- մշակվել է ՀՀ ամրոց-բնակատեղիների ներդրումային Կադաստր,
- գնահատվել է ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության պահպանման և օգտագործման ներուժը,
- մասնագիտական շրջանառության մեջ են դրվել ամրոց-բնակատեղիների «պահպանման ներուժ», «օգտագործման ներուժ», եզրույթները:

Պաշտպանության են ներկայացվում

1) ՀՀ ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության պահպանման ներուժի գնահատման սկզբունքները:
2) ՀՀ ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության օգտագործման ներուժի գնահատման համար մշակված ներդրումային Կադաստրը:

Աշխատանքի գործնական նշանակությունը

Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել ծրագրային փաստաթղթերի, նախագծերի, ճարտարապետահատակագծային առաջադրանքների կազմման, թե՛ հանրապետական (ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների, մշակույթի նախարարությունների, զբոսաշրջության պետական կոմիտեի և այլն), թե՛ մարզային մակարդակներով, ինչպես նաև ճարտարապետական մասնագիտության դասավանդման գործընթացում ուսումնամեթոդական ձեռնարկների և նախագծային առաջադրանքների մշակման համար: Հետազոտվող նյութի հիման վրա արված առաջարկությունները նաև կարող են կիրառվել ՀՀ ամրոց-բնակատեղիների ժամանակակից վերաօգտագործման մասնավոր ներդրումային ծրագրերի մշակման համար:

Աշխատանքի արդյունքները ներդրված են ՃՇՀԱՀ-ի բակալավրիատի 2016-2018 թվականների ուսումնական ծրագրերում՝ որպես «ՃՏՊԺՎՎԳԱ և Պ» ամբիոնի «Հայկական ճարտարապետության պատմություն» և «Համաշխարհային ճարտարապետության պատմություն» առարկաների բաղկացուցիչ մաս:

© National Library of Armenia

Աշխատանքի փորձահավանությունը

Ատենախոսության տարբեր բաժինները քննարկվել են ՃՇՀԱՀ Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնի սեմինարներում և նիստերում 2015-2018 թթ.:

Հրատարակումներ

Ատենախոսության թեմայով հրատարակված է 6 գիտական հոդված:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը կազմված է տեքստային և գրաֆիկական մասերից՝ ներկայացված մեկ հատորով: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 130 էջ՝ ներածություն, երեք գլուխ, եզրակացություններ, 98 անուն օգտագործված գրականության ցանկ և հավելվածներ, որոնք ներառում են գծագրեր, գրաֆիկներ, լուսանկարներ, սխեմաներ, աղյուսակներ (20 էջ):

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ ներկայացված են աշխատանքի արդիականությունը, նպատակը, խնդիրները, մեթոդաբանությունը, նորույթը և գործնական նշանակությունը, կառուցվածքն ու ծավալը:

Առաջին գլխում **«Ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման հայրենական և արտասահմանյան փորձը»** մշակվել է հետազոտության տեսական հիմքը, վերլուծվել են հայրենական և արտասահմանյան ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման գործնական օրինակներ, ինչպես նաև տրվել են ամրոց-բնակատեղիների և ճարտարապետական ժառանգության այլ օբյեկտների օգտագործման հիմնավորման մեթոդական մոտեցումներ:

Ամրոց-բնակատեղիների օգտագործման հայրենական փորձը ցույց տվեց կոշտ շուկայական տնտեսության պայմաններում դրա անհամապատասխանությունը գիտահիրավական դրույթներին: Գոյություն ունեցող պաշտպանական մեխանիզմները, օրինակ, պահպանության գոտիները, որոնք ապահովված չեն տնտեսական խթաններով, ձեռք են բերում անվանական արժեք և խախտվում են, իսկ 1998 թվականի «Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» օրենքում ճկունության բացակայությունը, որը չի խրախուսում ներդրումները և չի տրամադրում երաշխիքներ վարձակալներին, ենթաօրենսդրական ակտերի բացակայությունը բարդացնում են մասնավոր կապիտալի շարժը դեպի ամրոց-բնակատեղիների

© National Library of Armenia

վերաօգտագործման գործընթացներ: Սրա հետ մեկտեղ այն թանգարանների օրինակները, որտեղ պատշաճ ձևով պահպանությունը համատեղվում է տնտեսական կայունության հետ, շատ քիչ են (Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարան, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան):

ՀՀ տարածքում գտնվող ժամանակակից օգտագործմանը հարմարեցված ամրոց-բնակատեղիների փորձի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հարմարեցման առավել հաճախ հանդիպող տարբերակներն են պատմահնագիտական արգելոց-թանգարանները՝ «Մեծամոր» (1968թ.), «Էրեբունի» (1968 թ.), «Գառնի» (1988 թ.), «Լոռի բերդ» քաղաքատեղի» (2010 թ.), Արցախի Տիգրանակերտի պեղումների թանգարան (2010 թ.): Հայրենական փորձում առկա են նաև մասնավոր ներդրողների կողմից ամրոցների վերականգնման դեպքեր՝ Սև բերդ հուշարձանը Շիրակի մարզի Գյումրի քաղաքում և Զարնի և Պարնի քարայր–կացարանները Հաղպատ գյուղից արևմուտք՝ Լոռու մարզում: Նպատակադրված է հուշարձանները նպատակ ունեն վերածել տուրիստական կենտրոնների, որոնք պետք է ներառեն թանգարանային, հյուրանոցային մասեր:

Արտերկրների փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա է ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման (առաջնահերթ՝ եվրոպական փորձը) առաջին հերթին մասնավոր սեփականության զարգացած համակարգ: Մասնավոր ամրոց-բնակատեղիների պահպանման զանազան տարբերակների պետության կողմից անուղղակի մասնակցության (հարկային արտոնություններ ձեռքբերման, վերականգնման կամ հին շենքերի հանրային օգտագործման և այլն) և տեղի համայնքային կյանքի բազմագործառութային ներգրավվածության շնորհիվ ամրոց-բնակատեղիները պահպանվում են, և դրանք օգտագործելու պարագայում դառնում շահութաբեր: Ընդ որում, ստեղծվում է նաև ցանկացած ամրոց-բնակատեղիի օգտագործման հնարավորություն՝ անկախ դրա չափերից և պահպանվածության աստիճանից:

Խոշոր համալիրները օպտիմալ են ոչ առևտրային օգտագործման համար, որպես կորպորացիաների ներկայացուցչություններ (անգլիական Առունդել և Լիդս ամրոցները): Միջին և փոքր չափսերի ամրոցներում առավել տարածված է արտագնա միջոցառումների (սեմինարներ, գործնական հանդիպումներ, հարսանեկան արարողություններ) համար նախատեսված վարձակալման կենտրոնների տեղաբաշխումը (Քլոգան ամրոց, Իռլանդիա) և ժամանակավոր բնակելի գործառույթների իրականացումը (պատմական շինություններում տեղակայվող հյուրանոցային ցանցեր Պարադոր Իսպանիայում, Պոսադաս Պորտուգալիայում): Հանրահայտ են և մասնավոր հյուրանոցները, որոնցում տեղ է մնում ընտանիքի ապրելու համար, ինչը դրականորեն է ազդում

© National Library of Armenia

հաստատության կերպարի վրա: Գոյություն ունի ամրոցներում բազմաբնակարան շինությունների կազմակերպման փորձ, երբ միջնաբերդը, կցակառույցները և այգին տրոհվում են առանձին սեփականության և ընդհանուր օգտագործման տարածքների (ընդհանուր այգի, ավտոկայանատեղի, աստիճաններ, միջանցքներ և այլն): Նման օգտագործման օրինակ է Բամբորո ամրոցը: Պահպանվածության ցածր աստիճան ունեցող ամրոցները կարող են օգտագործվել որպես կեմպինգներ (Վելինգտոն դղյակ, Անգլիա), կամավորների ջանքերով աստիճանաբար վերականգնվել (Շեվրո ամրոց, Ֆրանսիա) կամ հանդես գալ որպես ստեղծագործական միջոցառումների հարթակ (Սենթ Թելո, Ֆրանսիա):

Կատարվել է ամրոց-բնակատեղիների օգտագործման հիմնավորման մեթոդական փորձի ուսումնասիրությունը, բացահայտվել է ամրոցների օգտագործման առաջարկների բազմաֆունկցիոնալությունը և դրանց առանձնահատկությունների համահարթեցումը:

Այս փորձի առանձին տարրեր կարող են հարմարեցվել ժամանակակից իրավիճակին: Այսպես, Ե.Ն. Չեռնյավսկայան փոխկապակցության մեջ է դնում ամրոցի օգտագործման տեսակը և պատմական կերպարի վերականգնման նպատակահարմար աստիճանը, համաձայն որի լրիվ վերականգնմանը համապատասխանում է, օրինակ, միայն թանգարանային օգտագործումը: Ե.Վ. Պոլյանցեվն առաջարկում է գործառույթները դասակարգել «հեռանկարայինի» (թանգարաններ և հանգստի հաստատություններ) և «ոչ հեռանկարայինի»՝ օգտագործման փակ, ուտիլիտար ռեժիմ ունեցողներ (հիվանդանոցներ, կրթական հաստատություններ, գիտահետազոտական ինստիտուտներ, արտադրական ձեռնարկություններ, զորամասեր): Ի. Լ. Կոռոբիցինան սահմանափակում է ժամանակակից օգտագործման հնարավորությունները այն գործառույթներով, որոնք համապատասխանում են գործառույթների ժառանգական զարգացման մտահղացմանը (հանգստի բազաներ, այդ թվում՝ աշխատանքային գործունեությամբ, արտագնա տեղական ակումբներ, պատմամշակութային, պատմագիտական և ռեկրեացիոն կենտրոններ, թանգարան-այգիներ, թանգարան-ապարանքներ և այլն) և առաջարկում է որոշակի ապարանքի համար ներդնել այդ գործառույթների համապատասխանության սահմանման միավորային համակարգ:

Շուկայական տնտեսության պայմաններում ամրոց-բնակատեղիների օգտագործման հիմնավորման արդիական մոտեցումների բացակայությունը պայմանավորեց սահմանված քաղաքային միջավայրի անուղղակի փորձին դիմելը: Մասնավորապես, «Ներդրումային ռազմավարություն. Սանկտ Պետերբուրգի կենտրոնի վերակառուցում» նախագծում օգտագործվում է ներդրումային գրավչություն մտահղացումը, որի հիման վրա կատարվում է

© National Library of Armenia

քաղաքային հանգույցների դասակարգում միավորային համակարգով: Մոդելում ներկայացվում է քաղաքային տարածքների լավագույն օգտագործումը և ներուժ ունեցող վարձակալման մոտեցումը, դրանց ենթակառուցվածքի, էկոլոգիայի և այլ գործոնների հիման վրա: Մոսկովյան տարածքների քաղաքաշինական ներուժին վերաբերող Ա.Բ. Նեկրասովի հետազոտությունում ներուժի որոշման մեխանիզմը որոնողական մոդելավորումն է: Ա.Ա. Եմելյանովն առաջարկում է առանձին օբյեկտների պահպանման կարգավիճակների վրա հիմնված «տարածքի պատմամշակութային ժառանգության խտության» մաթեմատիկական գնահատումը:

Ընդհանուր առմամբ փորձի վերլուծությամբ հնարավոր եղավ բացահայտել և ըմբռնել ժամանակակից պայմաններում ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման յուրօրինակությունը և մշակել երկրորդ և երրորդ գլուխների տեսական հիմքը:

Երկրորդ գլխում **«Հայաստանի Հանրապետության ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության պահպանման ներուժը»** դիտարկվել է տարածաշրջանային խնդիրը, գնահատվել է ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության պահպանման ներուժը:

«Ճարտարապետական ժառանգության օբյեկտի պահպանման ներուժ» եզրույթը մեկնաբանվել է որպես ամրոց-բնակատեղիների պատմական կերպարի և պահպանվածության մասին գիտելիքների հանրագումար: Պահպանման ներուժի գնահատումը՝ հուշարձանի պահպանման պայման հանդիսացող ճարտարապետության մասին տեղեկությունների հավաքագրումն է: Այսպիսով, պահպանման ներուժի մեծությունը անմիջականորեն կապված է օբյեկտի պատմական կերպարի հնարավոր վերականգնման աստիճանի և պահպանության հնարավոր ռեժիմի հետ (ամբողջական վերականգնում, մասնակի վերականգնում կամ վավերական վերաստեղծում, վերականգնում ըստ նմանակների):

Հիմնավորվել է ՀՀ ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության պահպանման ներուժի դիտարկումը Լոռու մարզի օրինակով, որը հարուստ է պատմաճարտարապետական հուշարձաններով, օժտված է պոտենցիալ զբոսաշրջային ռեսուրսներով և ունի բարենպաստ աշխարհագրական դիրք, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից այն հայտարարվել է որպես Հայաստանի «Հյուսիսային Դարպաս» զբոսաշրջային կենտրոն (որոշում 1222 – Ն, 1 Հոկտեմբերի 2009թ.):

ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների պահպանության ներուժը ներկայացվել է ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության

© National Library of Armenia

մասին տվյալների ամփոփ մատյանի ձևով, որը պարունակում է տվյալներ տարածաշրջանի ութսուներկու ամրոց-բնակատեղիի վերաբերյալ: Պահպանվածության աստիճանը գնահատվել է դաշտային ուսումնասիրությունների և գրական աղբյուրների վերլուծության արդյունքում:

Աղբյուրների վերլուծությամբ բացահայտվել է ՀՀ ամրոց-բնակատեղիների ճարտարապետությանը վերաբերող պատմական տեղեկությունների միասնականության բացակայությունը և անհամասեռությունը: Համեմատաբար բարձր պահպավածության աստիճան ունեն վեց ամրոց-բնակատեղի (Ախթալա, Սանահին, Հաղպատ, Խաչգունդ, Զարնի Այր, Պարնի Այր), ինչի հիման վրա առաջարկվել է դրանց ամբողջական վերականգնում (պահպանման բարձր ներուժ): Համադրելով հաջորդ խմբի ամրոց-բնակատեղիներին վերաբերող պատմական տեղեկությունները և պահպանվածության տվյալները՝ առաջարկվել է ևս տաս ամրոց-բնակատեղին (Լոռի Բերդ, Կայանբերդ, Հոռոմայր, Խորակերտ, Խուճապ, Նահատակ, Հնեվանք, Սեդվու, Մանստեվ, Սբ. Հովհաննես) մասնակի վերականգնում (պահպանման միջին ներուժ): Մնացած վաթսունվեց ամրոց-բնակատեղին, որոնցում նվազագույն պատմական տվյալները համատեղվում են ցածր պահպանվածության հետ, առաջարկվել է վերակառուցել ըստ նմանօրինակների (պահպանման ցածր ներուժ): Ստեղծման ժամանակաշրջանի մասին տեղեկությունների սղության պատճառով շատ չեն հորինվածքային լուծումների տարբերակները: Ամրոց-բնակատեղիների պատմական սեփականատերերի կամ ստեղծողների մասին տեղեկությունները թույլ են տալիս հնարավորության դեպքում հիմնվել դրանց նմանակների ճարտարապետության վրա: Որոշ դեպքերում նմանակներ կարող են ծառայել հարևան ամրոց-բնակատեղիները:

Երրորդ գլխում **«Հայաստանի Հանրապետության ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության օգտագործման ներուժ»** մշակվել է ամրոց-բնակատեղիների ներդրումային Կադաստր (հետագայում Կադաստր), որի նպատակն է ներդրումային գրավչության գործոնների հիման վրա գնահատել ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության ներուժը:

«Օգտագործման ներուժ» ասելով հասկանում ենք ամրոց-բնակատեղիի հետ պատմականորեն կապված և դրա տարածքում տեղակայված ճարտարապետաքաղաքաշինական օբյեկտների գործառական օգտագործման հնարավորությունների վերաբերյալ տեղեկությունների ամբողջությունը, իսկ «ներդրումային գրավչության գործոններ» ասելով՝ այն պայմանները, որոնք ապահովում են այդ օբյեկտների օգտագործման պոտենցիալ հնարավորությունները: Այս սահմանումը հիմնված է մեր կողմից արված

© National Library of Armenia

հետևության վրա. այն է ամրոց-բնակատեղիի օգտագործման համար ներդրումների շահավետությունը կախված է դրա օգտագործման հնարավորությունների բազմազանությունից:

Կադաստրը կառուցվել է ստորև ներկայացված սկզբունքներով.

1. Գնահատման բազմագործոնություն: Ներդրումների հիմքերի դաշտի որոնման առավելագույն ընդլայնում ամրոց-բնակատեղիի հարակից բնակավայրի, շրջանի և մոտակա քաղաքի մասշտաբներով:
2. Գնահատման արդյունքների քանակական ներկայացումը միավորների տեսքով ապահովում է Կադաստրի կառուցվածքի բաց լինելը, այսինքն ներդրումային գրավչության վրա ազդող նոր գործոններ ավելացնելու կամ գործոնները ըստ կարևորության աստիճանի դասակարգելու հնարավորությունը: Տվյալ հետազոտության սահմաններում ներդրումային գրավչության գործոնները չեն տարակարգվում, այսինքն կոնկրետ ամրոց-բնակատեղիի դեպքում հաշվի է առնվում այս կամ այն գործոնի կամ առկայությունը (1 միավոր), կամ բացակայությունը (0 միավոր):

Ամրոց-բնակատեղիների ներդրումային գրավչության գործոնները (ընդհանուրը՝ 25) որոշվել են մեթոդական փորձից ուղղակի փոխառությունների, ինչպես նաև գործնական փորձի վերլուծության սկզբունքով:

Ներդրումային գրավչության գործոնների Կադաստրային գնահատման միջոցով կարող են ստացվել ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության օգտագործման ներուժը որոշող հետևյալ տվյալները.

1. ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ներդրումային գրավչության վարկանիշը, որը համապատասխանում է ամրոց-բնակատեղիների բաշխմանը ըստ ներդրումային գրավչության գործոնների միավորային գումարի: Ըստ վարկանիշի կազմվում է մարզի ամրոց-բնակատեղիների յուրացման հաջորդականությունը:
2. Մարզի ամրոց-բնակատեղիներից յուրաքանչյուրում գործառույթների իրացման հավանականությունը՝ ներկայացված տոկոսով: Փորձի վերլուծությունը ցույց է տվել, որ այս կամ այն գործառույթի իրականացվելիությունը կախված է հենց ամրոց-բնակատեղիի առանձնահատկություններից և դրա համատեքստից, արտահայտված օրինակ՝ ներդրումային գրավչության գործոններով:

Ամրոց-բնակատեղիների ներդրումային գրավչության գործոնների և գործառույթների կապերի ընդհանրացման համար պահանջվեց մշակել օժանդակ ձևանմուշ, որը նկարագրում է գործառական օգտագործման

© National Library of Armenia

տասնմեկ տեսակ, որոնք փորձի վերլուծության հիման վրա սահմանվել են որպես հեռանկարային և ճշտորոշ ամրոց-բնակատեղիների պահպանության առումով, և քսանհինգ ներդրումային գրավչության գործոն:

Յուրաքանչյուր գործոնի և գործառույթի համապատասխանությունը յուրատեսակ է և գլխավորապես հանգեցնում է ստորև բերվող կապերին:

Թանգարնային գործառույթի իրականացման հնարավորությունը կապված է պատմական սեփականատերերի և (կամ) ամրոց-բնակատեղիի ստեղծողների, ականավոր գործիչների հեղինակության հետ: Ցանկալի է ամրոց-բնակատեղիի վավերական տարրեր ներկայացնող ցուցադրման օբյեկտների առկայությունը: Ընտրության հնարավորության դեպքում թանգարանները նպատակահարմար է տեղակայել այցելությունների համար առավել մատչելի վայրերում:

Առողջարանային գործառույթները, այդ թվում՝ առողջարարական ճամբարները, ծերանոցները, ստեղծագործական տները և այլ նմանատիպ կառույցները, որոնք իրենց կազմում ունեն բնակելի գործառույթ և թույլ են տալիս մասնաշենքերի տարածական տարանջատում, կարող են ամրոց-բնակատեղիներում իրականացվել բարենպաստ էկոլոգիական պայմանների, լայնածավալ բնական ռեսուրսների առկայության դեպքում: Երկրորդական կարևորություն ունեն ամրոց-բնակատեղիի ճարտարապետական որակները և լրացուցիչ սպասարկման հնարավորությունները:

Ագարակը կամ փոքր արտադրությունը կարելի է դասել այդ ամրոց-բնակատեղիների իրավահաջորդական զարգացման գործառույթներին: Ֆերմերային տնտեսությունների և արտադրական օբյեկտների իրականացման պարտադիր պահանջներից կարելի է համարել բնական ռեսուրսների մեծածավալությունը և շրջակա միջավայրի էկոլոգիական մաքրությունը: Ցանկալի են այնպիսի գործոններ, որոնք ապահովում են արտադրանքի սպառումը շուկաներում:

Եկեղեցական հաստատությունները, հոգևոր կրթական կամ ուխտավորների կենտրոնները և այլ եկեղեցական կառույցները կարող են կազմակերպվել ամրոց-բնակատեղիում առկա կամ ենթադրյալ եկեղեցու հիման վրա էկոլոգիական բարենպաստ պայմանների դեպքում:

Հանրային առևտրային կենտրոնի գործառույթը ամրոց-բնակատեղիի կարճաժամկետ վարձակալության հնարավորությունն է՝ պաշտոնական, ձեռնարկատիրական, գիտական, կրթական և սոցիալական միջոցառումների և բարձր մակարդակի տոնակատարությունների համար: Իրականացման հիմնական պայմանները այն գործոններն են, որոնք ապահովում են ամրոց-բնակատեղիի կարևորությունը և թանկությունը:

Կորպորատիվ շահույթ չհետապնդող հաստատությունները

© National Library of Armenia

(ներկայացուցչության կամ սեփական մասնավոր գրասենյակներ կամ գերատեսչական կազմակերպություններ, կազմակերպությունների մասնավոր կրթական կամ վերապատրաստման կենտրոններ, ուսումնական հաստատություններ), կարող են իրացվել այցելուների ներգրավմամբ չհետաքարքված և առևտրային նպատակներ չհետապնդող ամրոց-բնակատեղիում բարենպաստ էկոլոգիական պայմանների պարտադիր առկայության դեպքում:

Մշտական էլիտար բնակավայրը անձնական կամ բազմաընտանիք նստավայրի ձևով կարող է իրականացվել ամրոց-բնակատեղիում դրա հեղինակությունը և թանկությունը ապահովելու պայմանների առկայության դեպքում, սակայն ավելի փոքր չափով, քան հանրային կենտրոնները:

Ամրոց-բնակատեղիում հյուրանոցի կազմակերպման հնարավորությունը, առաջին հերթին, կապված է զբոսաշրջային ենթակառուցվածքների, այցելություններ ապահովող գործոնների հետ: Այլ գործոնների առկայությունը պայմանավորում է հյուրանոցի թանկությունը:

Սոցիալական սպասարկման (ակումբ, առևտուր, տեղական ինքնակառավարման մարմիններ, գրադարան և այլն) գործառույթները կախված են ապրանքների և ծառայությունների սպառման շուկայի մեծությունից:

Ամրոց-բնակատեղիներում կամավորների մասնակցությամբ ծրագրերի իրականացումը առավել հաճախ կապված է վերականգնողական աշխատանքների հետ: Աշխատանքային ճակատ ապահովելու համար անհրաժեշտ է ամրոց-բնակատեղիի որևիցե օբյեկտի ցածր պահպանվածություն, ինչպես նաև հանրային տրանսպորտով ամրոց-բնակատեղիին հասանելիությունը: Ռեկրեացիոն գործոնների առկայությունը ցանկալի է:

Կեմպինգները և հանրային զբոսայգիները կարող են կազմակերպվել վատ պահպանված ամրոց-բնակատեղիներում, բարենպաստ էկոլոգիական պայմանների տրանսպորտային մատչելիության առկայության դեպքում: Երկրորդական գործոնները կապված են ամրոց-բնակատեղիների ճարտարապետական բաղադրիչի պահպանության և լրացուցիչ սպասարկման գործոնների հետ:

Մշակելով ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության օգտագործման ներուժի բացահայտման ընդհանուր գործիքը՝ այն կիրառվել է ՀՀ Լոռու մարզի օրինակով (տես աղյուսակ), և ընդհանրացնելով գումարային ավելի քան 2900 ցուցանիշ, ստացվել են ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության օգտագործման ներուժի վերաբերյալ տվյալներ:

© National Library of Armenia

